

Հայ և հայություն

## Ուսմայել Պատկանյան

Ո՞վ է հայը. մի՞թե նա է, որ խոսում է հայ լեզվով,  
Եվ կամ՝ որի մականունը հանգում է յան մասնիկով,  
Որ ուտում է ամենայն օր ճաշին տոլմա ու փըլավ,  
Կամ՝ պարծանոք միշտ հագնում է հայի գըղակ ու հալավ:

Ո՞վ է հայը. մի՞թե նա է, որ գընում է Հայի ժամ,  
Ու տարենը հաղորդվում է խիստ սակավից՝ չորս անգամ,  
Որ կյանքումը պաս չի կերել, ծոմ էլ պահում է նույնպես,  
Հորանջելիս խաչ է կընքում՝ բաց բերանն ու երես:

Ո՞վ է հայը. մի՞թե նա է, որ տեսնելիս տերտերին  
«Օրինյա ի տեր» պատրաստ ունի ամեն րոպե իր բերնին,  
Որի համար մեծ ամոք է, նաև մեղք է մահացու,  
Թե Զատիկի թաթախմանը չուտե թերխաշ կարմիր ձու:

Չէ՛, սիրելի՛ ս, ազգությունը չէ արտաքին արարմունք,  
Հայ ծընելը անգամ չի տալ քեզ հայության իրավունք,  
Ով է կամ յան մականունիդ վերջի վանկի մասնիկը,  
Կարմիր ձվով կամ թե անձու կատարում ես զատիկը:

Քալլա-փաչա կամ թե բորշ է ամեն օրվա կերածըդ,  
Սեռտուկ, պայլտո կամ թե չուխա է վըրայի հագածը—  
Ողջը մին է. ծեսով չես տալ ազգիդ վընաս կամ օգուտ,

Տեղը մընա ազգությունը, այդ նաև վարձ չէ՝ հոգուդ:

Թէ դու հայ ես՝ հայությունդ պիտի հարգես անպատճառ,

Հայաստանը պիտի լինի հուսու աստըդ քեզ համար.

Օտարինը դու մի՛ ատիլ, մի՛ էլ սիրիլ կուրորեն,

Բայց քու Հայի օգուտները միշտ վե՛ր դասե ամենեն:

Արվեստ, ուսում, շրքեղարվեստ տարածե՛ հայ ազգի մեջ,

Բայց բրոնությամբ միշտ հեռացուր նորա մեջեն կրոնի վեճ.

Քեզ ի՞նչ շահ է, թէ դու կասես՝ հոգին բըխել է Հորից,

Կամ թէ Որդին հոգվով սրբով անսերմ ծընունդ է Մորից...

Թո՞ն, սիրելի՛, այդ խընդիրքը, աչքըդ դարձո՞ւր դեպ հարավ,

Բյուր-բյուր հոգիք դու կըտեսնես կորած դորա պատճառավ,

Բայց մինչ այսօր այդ խընդիրքը մընացել է անվըճիո,

Թույլ խելքո՞վը աշխատում ես քակել անքակ այդ կընձիո:

Սիրե՛ ազգը ո՞չ լոկ խոսքով, սիրե՛ ինչպես քու անձը,

Նորա օգտին, թէ պետք լինի, զոհե՛ բոլոր քու զանձը.

Մի՛ խընայիլ կյանքըդ անզամ, արյունըդ բեր նորան զոհ

Ո՞չ այն հուսով, որ քու ազգը իսկույն լինի քեզնից զոհ:

Իստակ սերը չի՛ պահանջում ամենսին տըրիտուր,

Թէ տվածը հետ առնվի՛ դորան կասեն առուտուր.

Բայց վա՛յ նոցա, որք անըզզա են յուր ազգի վիճակին,

Հազար անեծք նոցա վերա, երնեկ շան պես սատակին:

Թե դու հայ ես՝ զիտես արդյոք՝ ո՞վ էր ազգիդ նախահայր,  
Ո՞րտեղ, որ կողմ նա ընտրել էր ազգի համար Հայ աշխարհ:

Քանի՞ տարի անկախ մընաց Հայը օտար ազգերից,  
Ի՞նչ էր պատճառ, որ նա ընկավ իր առաջվա փառքերից:

Ո՞ւր ցըրվեցավ քու խեղճ հայը, ունի՞ այժմ օգնական,  
Կա՞ մի հընար, միջոց կամ հույս նորա կրկին նորոգման.  
Դե կա հընար՝ դու պատրա՞ստ ես անձրդ ազգիդ զոհ անել,  
Խիստ կըտըտանք, սաստիկ տանջանք, սով ու ծարավ միշտ տանել:

Դու պատրա՞ստ ես թողնել կայքը, ծընողք, եղբարք սիրական,  
Սիրելվույդ տեղ կըրծքիդ սեղմել միշտ մահառիթ հըրացան.  
Դու պատրա՞ստ ես անվախ երթալ թշնամիի սուրի դեմ,  
Սարսափելի մահը տեսնել դու կարո՞դ ես ծաղրադեմ:

Այդ ժամանակ քեզ հայ կասեմ, ես քեզ սիրով կը գրկեմ,  
Թե ջուր ընկնիս՝ ջրի՛ց, թե՝ հուր, ես քեզ հուրից կըփրկեմ,  
Բայց թե փորըդ տոլմաներից կամ փըլավից տըռաքի,  
Հավատացի՛ր, ուտելովդ օգուտ չես բերիլ ազգի: